համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Նկատի ունենալով, որ հայցվորը հայցադիմումը դատարան ներկայացնելու համար վճարել է պետական տուրքի գումարը, իսկ հայցը ենթակա է մասնակի բավարարման, սակայն հայցվորը նշված նորմի ուժով պահանջ չի ներկայացրել պատասխանողից հօգուտ իրեն բռնագանձել նախապես վճարված պետական տուրքի գումարը, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Նորոգում» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ Մասիս համայնքի՝ Մասիս համայնքի կարիքների համար ծառայությունների մատուցման գնման նպատակով 26.12.2025 թվականին կնքված թիվ «ԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/2» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումն ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, բավարարել.

1.1. Ոչ իրավաչափ ճանաչել Մասիս համայնքի (ի դեմս համայնքի ղեկավար Ն. Հակոբյանի) 23.03.2026 թվականի թիվ 1808 գրությամբ թիվ «ԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/2» ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումը (ծանուցումը):

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Աննա Շիլաջյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IEAC-E6AF-4D0E-9D23 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am